— Կեցցէ կայսրը », մռմռաց ուրիշ ձայն մ՚ալ, կարծես թէ որմոյն մէջէն։

Ընթերցուածոյն ժամանակ հրամանատարն ազդրովը եղէգին վրայ կոթընած էր, կերպ մ՚առնելու համար. երկու երիզապատ անձինքը չկարենալով մեկնութիւն մը տալ այս բաներուս՝ շփոթեր էին, և կը մտածէին թէ ինչպէս կրնային այս դէպքերը իրենց ենթադրած դաւակցութեանն հետ կապուիլ. անձնապահպետն ու սպասաւորը կը հարցընէին իրարու թէ ինչու համար այնչափ փութով խաւրուեցան։ Վերջապէս այս վերջինս Շառնէի դառնալով՝

« Կայսրուհւոյն կողմանէ ալ ծանօթութիւն մը կայ », ըսաւ։ Ու Շառնէ կարդաց լուսանցքին վրայ.

« Պ. Շառնէն կը յանձնեմ Պ. Մորան հաղարապետին խնամքը. մասնաւորապէս երախտագէտ կ՚ըլլամ բանտարկելոյն վիճակն անուշցընելու ջանիցը փոխարէն։

ՍՏՈՐԱԳՐԵԱԼ

ԳՈՎՍԷՓԻՆԷ »

« Կեցցէ կայսրուհին, » գոչեց Լուդուիկ։

Շառնէ համբուրեց ստորագրութիւնը, ու քանի մը վայրկեան գրուածքին վրայ նայեցաւ։

Կը շարունակուի։

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆՈՑ

Տարւոյս եղանակը, այսինքն բարեկենդանի օրերն՝ աւելի ներողամիտ ըլլալով, կը յուսանք որ չանարգեն այս ազգային երգս ալ, որու հեղինակն անծանօթ կը մնայ, երգոյն վերջի տունը պակաս ըլլալով, ուր սովորաբար երգողք իրենց անունը կը գնեն. օրինակն ալ հարիւր տարի մը առաջ գրուած է անվարժ ձեռքով մը՝ Միքայէլի Սարկաւագի. այն պատճառաւ ալ քանի մը սխալ և մեզի անհասկընալի բաները՝ կը թողունք անտեսութեան վարպետաց, կամ աւելի լաւ օրինակի։ — Մեր օրինակին մէջ երգոյս վերնագիր դրած է,

ԴԿ. ՇԱՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԱՆ. ԱՍԱՑԵԱԼ Է ՈՒՐՈՒՄՆԷ ԲԱՆԱՍԻՐԷ ԱԶՆԻՒ ԵՒ ՈՒՐԱԽ

Արևելք առաջին
Եւ արևմուտք որ է վերջին՝
Նստեալ հային դէմ փարչէն,
Եւ զանազան ի լի հոչին [1],
Բարեխօսեա մեծ կարասին
Որ զանազան է իւր գինին։
Բարեխում է գինի
Եւ յոյժ փայլուն սեղան ի լի.
Գէր դէր հաւեր զանազան,
Եւ այլ կարագ խառն ընդ մեղրի։
Բարեխօսեա. և այլն։
Գերադոյն լաւ մաղայ [2]
Եղով տապկած ձուկն Թաղայ.
Խումար մարգուն բոլ պտուկ.
Բղվով [3] բռնած սիրուն բաղայ։
Բարեխօսեա. և այլն։
Դարձեալ հայիր թէ ինչ կայ.
Հալվայ, բորակ, և փախլաւայ,
Գառին դրած զափամայ,
Եւ փորն ի լեր պահարլամայ։
Բարեխօսեա. և այլն։
Երանեալ հերիսայ,
Եւ պատուական փոլլափաչայ.
Սամիթ, Թարխուն, ասիդայ [4],
Ցոլով եփած փալուզայ [5]։
Բարեխօսեա. և այլն։
Զարդարեալ է սեղան.
Ղապլու փրլաֆ մսով եփման,
Ցեղուցեղ պիպերով
Եւ քիշմիշովն միաբան։
Բարեխօսեա. և այլն։
Երևեցաւ օրհասարկն.
Փուքով եկեալ լահանայ,
Եաֆրաղ, քուֆթայ զալիյա [6]
Ակիսի եկուն և զապուրդայ։
Բարեխօսեա. և այլն։
Ընտրեալ ընտիր աղանի
Եւ պլլարրչին սեղանոյս իբաբ,
Ոչխարի միս է լիկամ,
Փանչիկաչուն [7] է լավ քապապ։
Բարեխօսեա. և այլն։
Թագաւոր է խոռոզն,
Եւս առաւել գեղեցկագոյն

1. Գուցէ Քլլը կ՚իմանայ, սակառ։
2. Մէղէ։
3. Բղուղ. հողէ սման, գավանոց։
4. Աշիպէ, խիւս, կամ խաւիծի նման։
5. Բարակ խիւսով շինուած։
6. Ղալիէ, անուշահոտ, պատուական։
7. Գուցէ ֆէնճէնիլուղ, Հինգտերևուկ բանջարն։

Կարմիրերանդ գոյնզգոյն,
Թագ և պարծանք մեր սեղանոյն։
Բարեխօսեա՝ և այլն։
Ժողովեցան ի սեղան՝
Արձակեցին զնորոնչոյն [1]՝
Ուտեն խմեն անուշ գինին
Եւ փառս տան անձառելոյն։
Բարեխօսեա՝ և այլն։
Ի կաքաւուց բերեալ միս,
Ի սալամուց [2] լաւ նաֆիսիս [3],
Աղունոյ ձագ մեզ ընթրիս
Հաճոյ թուեցաւ բազմականիս։
Բարեխօսեա՝ և այլն։
Լուեցին միաբան
Եւ ննջեցին ամենեքեան։
Երբոր քնեցան և զարթեան,
Շուտով հասեալ դաւն [4] ու կթղայն [5]։
Բարեխօսեա՝ և այլն։
Խնդացին և զուարճացան
Երբոր տեսան դաւն ու կթղայն
Նստան բոլոր ի սեղան
Ըմպեն զարաղն [6] ուրախանան։
Բարեխօսեա՝ և այլն։
Ծաղիկ բերեալ ի սեղան,
Վարդ, մանուշակ և ուէհան,
Ղարանֆիլ և սուսամ։
Նարկիզ, զիւմպիւլ և շուշան։
Բարեխօսեա՝ և այլն։
Կարմրացեալ գոյնզգոյն
Կանանչ բերեալ զվարդենին,
Մանուշակ թիւ պարանոց
Քաղցրատեսակ հոտոտելի։
Բարեխօսեա՝ և այլն։
Հաղարվարդն այլ բոլոր
Զգունոմն դեղ և աղվոր,
Կոկոնին հետ միաւոր
Ի մէջ նոցա փառաւոր։
Բարեխօսեա՝ և այլն։
Զևեցան ի սեղան
Պայծառ տեսլեամն անանման,
Արձակեցին հոտ անուշ
Քաղցրացուցին ըզքիմս մարդկան։
Բարեխօսեա՝ և այլն։
Ղամբարանման փայլէին
Պայծառ գունով մէջ սեղանին։
Նոքա առեալ վայլեցին
Եւ փառս տուին պարգևողին։
Բարեխօսեա՝ և այլն։

Ճրուաթափ արարին [1]
Զճնճղուկն մեծ և ահագին [2],
Բերին յառաջ զենեցին
Զփետուրն իւրմէն կողոպտեցին։
Բարեխօսեա՝ և այլն։
Մեծամեծք խորհուրդ արին
Բերին ըզսագն ընդ արօսին [3]։
Մանրամասն կտրատեցին
Եւ ճնճղկան փորն լցին։
Բարեխօսեա՝ և այլն։
Ցեռոյ սինի մեծ կազմեցին
Անուշահամ զարդարեցին։
Բերեալ յառաջ մատուցին
Մէջ սեղանին բազմեցուցին։
Բարեխօսեա՝ և այլն։
Նորոգեցան նոր սեղան։
Ցերբոր եհաս ըզճնճղկան՝
Ի յայն քառասուն մարդն միաբան
Մէկ թևն կերան յագեցան։
Բարեխօսեա՝ և այլն։
Շնորհեցին ի մրգերաց։
Ցառաջ բերեալ մատուցին
Գեղեցիկ և զանազան։
Նորոյ սեղան զարդարեցին։
Բարեխօսեա՝ և այլն։
Ուղիղ բոլոր և աղուոր
Սպիտակ կարմիր և փառաւոր
Համով հոտով լի խնծոր,
Մէջ մրգերացն թագաւոր։
Բարեխօսեա՝ և այլն։
Զամէջ կթուն եկեալ շատ,
Ամրաւ և թուղ մեկ մեկ հատ։
Շաղբալուռթ [4] լայլապուն,
Խառնեալ ի մէջ նոցա փշրատ։
Բարեխօսեա՝ և այլն։
Պընդուկն [5] եկեալ ամբիններով,
Եւ նուշն ի հետ անուշ համով,
Ֆըստուխին է մաղտաբով
Քան զամենայն մրգերն յոլով։
Բարեխօսեա՝ և այլն։
Զանաց խիեարն յառաջ մեննակ,
Եւ յետ նորա խարպիզակ, սեխ,
Եւ շըլընկուն զձըմերուկ [6]

1. Գինեերը կտրեցին։
2. Ծաղրածուութեամբ կը մեծցընէ զճնճղուկը, ապա թէ ոչ՝ Ջայլամին պէս մեծ թռչուն մը պիտի ըլլայ, որ քառասուն հոգի մէկ թևը ուտեն կշտանան։
3. Արօս կամ զարշ, սագէ մեծ թռչուն մը, թևերը գունաւոր, որ գտուի 'ի Հայաստան։
4. Ընքակալնոյ պտուղ, ֆընդիզ։ կամ շագանակ։
5. Ա՛ա՛լ վերնոյն նման պտուղ։
6. Կարծեմ՝ ձմերուկին շընչին՝ այսինքն վը-ղին՝ դանակ հասուցեք, կ'ըսէ։

Փուլթով հասուցէք դանակին։
Բարեխօսեա՝ և այլն։
Ռեմին քաղցրիկ, մանանայ,
Նոզըն շաքար միայնայ՝
Ձադուց մեղ ծաղ[1] բոլոր
Մէջ սեղանին զօրանան՝
Բարեխօսեա՝ և այլն։
Սերկևիլ Թրթուաշիկ՝
Նուռն այլ հեռ ելնի քաղցրիկ,
Անոյշ մանռայ տանծ[2] մալաչի՝
Աբռասի և մեհրէնիկ։
Բարեխօսեա, և այլն։
Վասրն մեր գայ զարանֆիլ,
Քաղցը տարչին և զանկաֆիլ,
Ղարապիպէր, զաղուլայ[3]
Ձաւրզ[4], և բաղում տարիֆիլֆիլ։
Բարեխօսեա, և այլն։
Տէրտէրներն և տիրացուքն
Ցորժամ սեղանոյս հանդիպին,
Հընչեցուցէք զանդն և ձընձաղայն,
Երգեցուցէք տաղ և շարական։
Բարեխօսեա, և այլն։
Բամբ Թատերացն սուղան Դաւթի,
Եւ քաղցրաձայն տանտուռ հըզօր,
Մուղնի[5] և փող գանալուրայ,
Նարինհասակ[6] քամանչայ։
Բարեխօսեա՝ և այլն։
Ցաւն էր պատեր զիս չորս դիմաց
Եւ ես տրկար էի մնաց,
Զայսչափս կարէ[7], Ժողովեցի,
Որոնեալով կամաց կամաց՝
Բարեխօսեա, և այլն։
Իւսեալ պատիւս զուարճացէք,
Ով մեծամեծք և տանուտէրք՝
Կերէք արբէք ուրախացէք
Այսչափս բաւ է թէ գիտէք։
Բարեխօսեա, և այլն։
Փառս տացուք ըստեղծողին
Այսչափ բարեաց պարգևողին։
Օրհնէ, Տէրտէր, զհայր-մերայերկին՝
Եղեալ գընայք յեկեղեցին,

1՝ Ծաղմեղ, աղնիւ մեղ՝ նոր ձագուց շինած։
2՝ Քաղցրածոր, մեղ կաթող։
3՝ Քիւֆիւէ, զուիրակ խոտ, կիւլէի օրոտ։
4՝ Ընկոյզ Հնդկաստանի, համեմ։
5՝ Միւղնին, երաժիշտ, երգեցողք։
6՝ Ցորենակին Նորին կամ Նարին հասակ։
7՝ Կարէի, կընայի։

Նորագիւտ հնութիւնք Ասորեստանի մէջ՝

Մինչդեռ Պ՝ Վոդա և Բիձիդանի ետևէ էին յունական և հռոմէական հետաքրքրական հնախուզութեանց, ընդհակառակն գտան Աստուածաշնչի հնութեանց վրայ տեսութիւն ընող մատենագրաց վերաբերեալ կարևոր եբրայական հնութիւններ։

Գտնուեցաւ եբրայեցւոյ մը տուն քրիստոսէ մէկ կամ երկու դար առաջ։ Քանի մը սենեակներ իրենց բնական վիճակին մէջ, այսինքն իրենց ամենայն կահ կարասիքներովը, որոնց մեծագոյն մասը յիշեցնել կու տային Եգիպտոսի մէջ գտնուածները։ Բայց որ աւելի զարմանալին է, գտնուեցան ուրիշ այլ և այլ գրքեր ալ, որով կը հետևի ըսել թէ այն տունը՝ եղած ըլլայ մէկ ուսումնականի մը տուն։ Այս գրոց մէջ կային Մովսէսի գիրքը և Սաղմոսք Դաւթի և մէկ հաւաքածու մը եբրայական ոտանաւորաց անծանօթք առ ամենայն քանզհմուտ եբրայագէտս։ Բոլոր այս նորագիւտ հնութիւններս խրկուեցան Լոնտրայի Ասիական Ընկերութեան։

Մարդիկ՝ գրեթէ ամենքը՝ կը գանգատին իրենց յիշողութենէն, բայց ոչ ոք իրեն դատմունքէն։

Ինչպէս դիմաց պակասութիւնը, նոյնպէս խելացը՝ երթալով կ՚աւելնայ։

Այնչափ կը ծածկենք ուրիշներէն մեր ինչ ըլլալը, որ վերջապէս մենք մեզի ալ անծանօթ կը մնանք։

Խաբուելու մի միայն Ճամբան այն է որ մարդ ինք զինքը խորագէտ համարի։

ՐՕՇՖՈՒԳՈ